ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ապրիլի 2023 թվականի N 646-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 2062-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 17-ի «Անշարժ գույքի կադաստր վարող մարմնին Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի ընթացիկ հաշվառման մասին տեղեկություններ ներկայացնելու կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 29-ի N 680-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 2062-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) հավելվածի վերնագրում «Հավելված» բառը փոխարինել «N 1 հավելված» բառերով:

2. Որոշման հավելվածով սահմանված կարգի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2. Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինները մինչև յուրաքանչյուր ամսվա 15-ը անշարժ գույքի կադաստր վարող մարմնին են ներկայացնում՝

1) նախորդ ամսվա ընթացքում նոր առաջացած կամ փոփոխություններ կրած հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի ընթացիկ հաշվառման մասին անհրաժեշտ տեղեկությունները.

2) նախորդ ամսվա ընթացքում Կառավարության սահմանած ցանկում ընդգրկված՝ սահմանամերձ բնակավայրերից տարբերվող բնակավայրերում հասարակական և արտադրական նշանակության շինությունների, բազմաբնակարան բնակելի շենքերի, բազմաբնակարան բնակելի շենքի ոչ բնակելի տարածքների, բազմաբնակարան բնակելի շենքերում տեղակայված հասարակական և արտադրական նշանակության շինությունների, բազմաբնակարան բնակելի շենքերում տեղակայված ավտոտնակների (ավտոկայանատեղիների, ավտոհանգրվանների), ինչպես նաև Երևան քաղաքի վարչական սահմաններում անհատական բնակելի տների կառուցման համար տրամադրված շինարարության թույլտվությունը, հաստատված նախագիծը, ինչպես նաև ըստ նախագծի կառուցվող շինությունների որակական ու քանակական բնութագրիչների վերաբերյալ տվյալները.

3) ներկայացման ենթակա փաստաթղթերի, շինությունների որակական ու քանակական բնութագրիչների տեսակները սահմանված են համաձայն սույն կարգի N 2 ձևի:»:

3. Որոշման հավելվածով սահմանված կարգում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 3-րդ կետում «Սույն կարգի 2-րդ կետի» բառերը փոխարինել «Սույն կարգի 2-րդ կետի 1-ին ենթակետի» բառերով.

2) 4-րդ կետում «Սույն կարգի 2-րդ կետում» բառերը փոխարինել «Սույն կարգի 2-րդ կետի 1-ին ենթակետում» բառերով:

4. Որոշման հավելվածով սահմանված կարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 7.1-ին կետով՝

«7.1. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 20-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմիններն անշարժ գույքի կադաստր վարող մարմնին են ներկայացնում՝ շինարարության թույլտվության ժամկետը 2023 թվականի հունվարի 1-ի դրությամբ ավարտված և չերկարաձգված, շինարարության թույլտվության ժամկետը 2023 թվականի հունվարի 1-ի դրությամբ ավարտված և «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-569-Ն Հայաստանի Հանրապետության օրենքն ուժի մեջ մտնելուց հետո երկարաձգված, ինչպես նաև 2023 թվականի հունվարի 1-ից մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը շինարարության թույլտվության ժամկետն ավարտված և երկարաձգված Կառավարության սահմանած ցանկում ընդգրկված՝ սահմանամերձ բնակավայրերից տարբերվող բնակավայրերում հասարակական և արտադրական նշանակության շինությունների, բազմաբնակարան բնակելի շենքերի, բազմաբնակարան բնակելի շենքի ոչ բնակելի տարածքների, բազմաբնակարան բնակելի շենքերում տեղակայված հասարակական և արտադրական նշանակության շինությունների, բազմաբնակարան բնակելի շենքերում տեղակայված ավտոտնակների, ինչպես նաև Երևան քաղաքի վարչական սահմաններում անհատական բնակելի տների կառուցման համար տրամադրված շինարարության թույլտվությունը, հաստատված նախագիծը, ըստ նախագծի կառուցվող շինությունների որակական ու քանակական բնութագրիչների վերաբերյալ տվյալները:»:

5. Որոշման հավելվածով սահմանված կարգի 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«9. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝

1) սույն կարգի 2-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված տեղեկություններն անշարժ գույքի կադաստր վարող մարմնին ներկայացվում են թղթային կամ էլեկտրոնային եղանակով.

2) սույն կարգի 2-րդ կետի 2-րդ ենթակետում և 7.1-ին կետում նշված շինարարության թույլտվությունը, հաստատված նախագիծը, ինչպես նաև ըստ նախագծի

կառուցվող շինությունների որակական ու քանակական բնութագրիչները մուտքագրվում են e-cadastre.am կայքում համայնքների համար հասանելի առցանց հարթակ: Շինարարության թույլտվությունն ու հաստատված նախագիծն առցանց հարթակ են մուտքագրվում փի-դի-էֆ (pdf) կամ ջեյ-փի-ջի (jpg) ձևաչափերով:»:

6. Որոշման հավելվածով սահմանված կարգը լրացնել N 2 ձևով՝ համաձայն հավելվածի:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունիսի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

28.04.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ